Ազգ
Azg
armenian daily
29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2002 ԵՐԵՔՇԱԲԹԻ 196 (2641)

# Հրեական լոբբին Իլհամ Ալիեւին խաղաղական լուրջ դեմք չի համարում

Ադրբեջանի ընդդիմադիր «Ենի մուսավաթ» օրաթերթը հոկտեմբերի 26-ի համարում գրում է, որ նախագահ Ալիեւի որդի Իլհամին ԱՄՆ հրեական լոբբին սառն ընդունելության է արժանացրել: Թերթը, վկայակոչելով անանուն մի աղբյուրի, գրում է, թե ադրբեջանական գահի ժառանգորդին ԱՄՆ հրեական լոբբին որպես լուրջ խաղաղական դեմքի չի ընդունել, ինչի պատճառով Հեյդար Ալիեւը խիստ զայրացել է. մի քանի օր անց, ընդունելով Եգիպտոսի պետտնտեսագործնախարար Ֆայզա Նագային, Ադրբեջանի նախագահն Իսրայելի վարչապետին մեղադրել է պաղեստինցիների հանդեպ չափից դուրս դաժանության մեջ: Եթե Իլհամին հրեաները լուրջ ընդունեին, ապա Ալիեւը Եգիպտացի պաշտոնյայի հետ զրույցում նման հայտարարություն թույլ չէր տա Իսրայելի հասցեին, եզրակացնում է «Ենի մուսավաթը»:

ԲԱՔՈՒ

## Հեյդար Ալիեւը հարմար գտավ փակել ահաբեկիչների «դեսպանատունը»

*Բաքվում Ռուսաստանի դեսպան Ռյաբովը երախտագիտություն է հայտնում Ադրբեջանի իշխանություններին*

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Բաքվում Ասլան Մասխադովի «դեսպան» Ալի Ասաեւն ուրբաթ օրը «Զերկալո» թերթին տված հարցազրույցում ասել էր. «Մոսկվայի գործողությունները չեմ կարող անվանել ահաբեկչություն»: Իրենց հերթին, արեւմտյան եւ ամերիկյան լրատվամիջոցները կարծես թե ափսոսում են Մոսկվայի Թատերական կենտրոնի ողբերգությունը որակել ահաբեկչական գործողություն, չեչեն ահաբեկիչների համար օգտագործվում են «rebel» ապստամբ բառը: Հավանաբար, մինչեւ այս հրապարակումը հասնի ընթերցողին, անմեղ զոհերի թիվը, գուցե գերազանցի 200-ը: Եթե «հումանիստ» ֆրանսիացիների եւ ամերիկացիների համար Բարաեւը, Բասաեւը, Մասխադովը, մյուս չեչեն դաշտային հրամանատարները ապստամբներ են, ապա «արյունախում» ռուսները նույն հաջողությամբ Ուսամա բեն Լադենին կարող են անվանել «freedom fighter» ազատամարտիկ:




Տես ➧ էջ 2

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋ ՉԳՏԱՎ

## Պատանդների ազատումը դեռ հաղթանակ չէ

*Երեկ սգո օր էր Ռուսաստանում*

Երեկ առավոտյան Մոսկվայի հիվանդանոցներից դուրս գրված Թատերական կենտրոնի նախկին պատանդների թիվը հասավ 239-ի: Ըստ Ինտերֆաքս գործակալության, առայժմ հիվանդանոցներում մնում է 405 մարդ, այդ թվում՝ 9 երեխա: Տասնյակ մարդիկ դեռեւս տեղեկություն չունեն իրենց հարազատների մասին եւ փնտրում են նրանց:

ՌԴ առողջապահության նախարարության տվյալներով, զոհերի թիվը 118 է, բայց, ըստ բժիշկների, արդեն հիմա կարելի է խոսել հավանական 200 զոհերի մասին: «Էխո Մոսկվի» ռադիոկայանը հաղորդել է, որ 100-ից ավելի պատանդներ զոհվել են ժամանակին բուժօգնություն չստանալու պատճառով: Բանն այն է, որ սկզբում իշխանությունները բժիշկներին արգելել էին «գազային թունավորում» ախտորոշում տալ՝ այն փոխարինելով «սրտային անբավարարությամբ»:

Տես ➧ էջ 5




## Ամմանում սպանվեց ամերիկացի դիվանագետ

Երեկ Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, իր տան առաջ անհայտ անձանց կողմից սպանվեց ամերիկացի դիվանագետ, USAID-ի տեղի գրասենյակի պատասխանատու Լորենս Ֆոլին: Հանցագործը նրա վրա կրակել է 8 անգամ եւ դիմել փախուստի: Առաջինը Ֆոլիի տիկինն է հայտնաբերել ամուսնու դիակը եւ զանգահարել հիվանդանոց ու ոստիկանություն:

Ընդամենը 3 շաբաթ առաջ Հորդանանում Մ. Նահանգների դեսպանատունը, նկատի ունենալով երկրում բարձրացող հակաամերիկյան տրամադրությունները, իր քաղաքացիներին կոչ էր արել ծայրահեղ զգուշության:

## Ռազմական հուժկու գործողություններ Գրոզնու մոտ

Ինչպես ակնկալվում էր, երեկ, ըստ Ինտերֆաքս լրատվական գործակալության, դաշնային զորքը ռազմական հուժկու գործողություններ է ձեռնարկել Գրոզնու դեպի արեւելք ընկած տարածքում: Գործակալության տվյալներով, սպանվել են չեչեն 30 գրոհայիններ: Մյուս կողմից, նախագահ Վլադիմիր Պուտինը երեկ բացելով կառավարության նիստը եւ ահաբեկչության զոհերի հիշատակը 1 րոպե լռությամբ հարգելուց հետո հայտարարեց, որ այսուհետ բացառվում է ահաբեկիչների հետ որեւէ պայմանավորվածություն, բացառվում է նաեւ նրանց պայմանների առաջ տեղի տալը: Նրանց դեմ պայքարն ուժեղանալու է: Պուտինն ասաց. «Մենք ամբողջ ուժով կռվելու ենք ահաբեկիչների, նրանց ղեկավարների, ինչպես նաեւ նրանց ֆինանսավորողների դեմ, որտեղ էլ որ նրանք լինեն»:

## Հայ պատանդներից մեկը մահացել է

ՄՈՍԿՎԱ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մոսկվայի Թատերական կենտրոնի հայ պատանդներից 43-ամյա Մյասնիկ Զաքարյանը հիվանդանոցում մահացել է:

Մոսկովյան թիվ 13 հիվանդանոցում են գտնվում Կարեն Հայրապետյանը եւ Արմեն Առաքելյանը:

Արդեն հիվանդանոցից դուրս են գրվել Թամար Գեւորգյանը, Մարգարիտա Աղաբաբովան, Իվան Հովհաննիսյանը, Քրիստինե Կարապետյանը եւ Ելենա Մանասյանը:

## Կոպենհագենից Մասխադովը Մոսկվային առաջարկում է բանակցել

Երեկ Կոպենհագենում, հակառակ դանիական իշխանություններին ուղղված ռուսական զգուշացումներին, բացվեց չեչենների «Համաշխարհային առաջին կոնգրեսը», որտեղ Մասխադովը հայտարարեց, թե իրենք դատապարտում են... Մոսկվայի Թատերական կենտրոնում տեղի ունեցած ահաբեկչությունը: Այնինչ, ինչպես տեղեկացրել ենք նախապես, հենց Թատերական կենտրոնը գրաված չեչեն ահաբեկիչներն առաջին իսկ օրը հայտարարել էին, թե իրենք ենթարկվում են միայն Մասխադովի եւ Բասաեւի հրահանգներին: Իր ելույթում Մասխադովը Մոսկվային առաջարկեց բանակցել իրենց հետ, սակայն առանց նախապայմանների: Ինչ վերաբերում է Դանիայի իշխանություններին ուղղված Մոսկվայի զգուշացմանը, թե նախագահ Պուտինը չեղյալ կհայտարարի Կոպենհագեն կատարելիք պաշտոնական այցը եւ մասնակցությունը Եվրամիություն-Ռուսաստան գագաթաժողովին, դանիացիք երեկ հայտարարեցին, իրենց օրենքներից ելնելով, որ չեն կարող արգելել չեչենների խորհրդաժողովը, սակայն փոխարենն առաջարկել են Ռուսաստան-Եվրամիություն գագաթաժողովը տեղափոխել Բրյուսել:

EXPO

Ամենագեղեցիկ

ցուցահանդեսը

Տպագրություն: Հրատարակություն: Գովազդ:
EXPO 2002

Նոյեմբերի 1-3

Կազմակերպիչ՝
LOGOS EXPO Center
Հեռ: 374 1 56 4218, 56 6367
Ֆաքս 374 1 564218
E-mail: logos@expo.am
http://www.expo.am

AUSTRIAN AIRLINES
The Most Friendly Airline.

## Անաստասյանը հաղթում է՝ սպասելով հայր դառնալուն

*Ռեպորտաժ «Ավստրիական ավիաուղիների» աջակցությամբ*

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բլեդ

Շախմատի համաշխարհային 35-րդ օլիմպիադայի բացման հանդիսավոր արարողությունն ընթացավ առանց ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովի (էլիստայում նա զբաղված էր Կալմիկիայի նախագահի պաշտոնում վերընտրվելու խնդիրներով): Նրան փոխարինեց ՖԻԴԵ-ի պատվավոր նախագահ Ֆլորենսիո Կամպոմանեսը: Ավանդույթի համաձայն, օլիմպիադայի բացման պատիվը տրվեց Սլովենիայի Հանրապետության նախագահ Միլան Կուչանին: Բացման արարողությունը բավական հաջող էր, բայց, անկասկած, չէր կարող մրցակցել երեւանյան օլիմպիադայի նրբաճաշակ ներկայացման հետ: Շախմատիստներն ու լրագրողները Սլովենիայում հաճախ են հիշում Երեւանում 6 տարի առաջ ընթացած օլիմպիադան՝ կազմակերպական առումով համարելով մինչ այժմ չգերազանցված: Իսկ Բլեդի օլիմպիադան բացթողումներ ունի, որոնք տանտերերը փորձում են հնարավորության չափով հղկել:



Տես ➧ էջ 7

